կենաց, որ թէ իրենց և թէ իրենց ընտանեացն ու ազգին երջանկութեան պատճառ ըլլան։ Այս էր անմահ յիշատակաց արժանի Բարերարին փափաքը. աս փափաքանաց կատարմանը համար անխնայ եղած է մեր ջանքը, և հիմա ուրախութեամբ կը տեսնենք որ այս փութաջան և ընտիր աշակերտաց խումբը ալ կը պսակէ մեր աշխատութիւնն ու կը մոռցնէ, և միանգամայն նոր աշխատութիւններու նորէն ձեռք զարնել կը յորդորէ։

ՅԵՏԻՆ ԽՕՍՔ

ԱՌ ԱՒԱՐՏԱՎԱՐԺ ՀԱՄԲԱԿՍ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅՈՒՂԱՐԿԵԼՈՎ ԶՆՈՍԱ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Այ ի՜սկզբն ստուգիւ այս բաբախմունք սրտի և շրթանց, որ կանխեն յիս քան զբարբառ, նշանք՝ եթէ յետին են ինձ բանք այսօր առ դաս մի աշակերտաց Ռափայէլեան վարժարանիս և իմ իսկ՝ ժամանելոց յաւարտ վարժիցն. արդարև ստոյգ հասեալ կայցեմք յելս բազմայեղանակ ասպարիզիս։ Ընդ՝ինն գնացին, սպառեցան ուրեմն սուղ ինչ պակաս եօթն ամք՝ յորմէ հետէ պարապէին սոքա յուսմունս հանապազօր առաջի աչաց մերոց. և աւարտեցաւ ժամանակն դաստիարակութեան, ժամանակ՝ քան զոր չիք մեծ 'ի շահ, և դժուարին 'ի համար։ Ա՛յսպէս ուրեմն և դուք, ջանասէր մանկունք, որք առաւել քան թէ զերրորդ մասն կենաց ձերոց ծախեցէք յօտար երկրիս յայսմիկ, հազարս ասպարիզաց հեռի 'ի քաղցր դիմաց ընտանեաց, զորէն ձգնազգեցիկն մանկանց ոչնեալք յուսման առ ոտս նորոց ոմանց և եկամուտ ձեզ ծնողաց, մերթ հեծելով և մերթ հրձուելով, և դո՛ւք արդ թողեալ մեկնիք 'ի դիւրալուր ձեզ ժողովոյս, 'ի խնամոտ հոգաբարձուացդ և 'ի վաստակաւոր ուսուցչաց, և հեռանայք գնայք ծածկիք ուր սիրտք և պարտք կոչեն զձեզ. և այսպէս անահք և յանդգունք 'ի համաշխարհական ծուփս ժամանակիս, խլրտելոց աղանց և պետութեանց, դիմադրաւեալք ընդ արհաւիրս ահեղաբոմբիւն երկաթացան հրաձգութեանց, և ընդ կասկածաւոր ալիս, զոր առաւել քան զմրրիկս օդոց՝ հետաղօտութիւնք վրդովեն նախանձընդդէմ իշխանականաց։ Յայսպիսումն ժամանակի սլանա՛ք դուք 'ի հայրենիս։

Ա՛յո. տեսանեմ զնոյն ինքն զհայրենիս հրաւէր ձեզ արկեալ յիւր օժանդակ. տեսանեմ զձեզ պատրաստս և յօժարս առ ձայն նորա. տեսանեմ և զարգոյ ատեանս՝ հաւան երկոցունդ կամաց։ Ա՛յո, հասին հասին և մեզ ժամք բաժանարարք և խօսք յետինք. ամք ամիսոփեցան 'ի վայրկեանս, և ժամանակն ահա թռանի ձեօք հանդերձ, և ես գրկաձիգ՝ փարիմ զուսնայնութեամբ։ Ո՛վ անդարձական օրինաց ժամանակի։ Դուք արդ ուրեմն հրաման տառապելոյս, ո՛վ աստուածապատիւ Տէր, պարք վարդապետաց և ժողով իմաստասէր, հրաման տուք ինձ թարգման կալ ըղձից և հաճութեան ձերոյ և զայս ևս նուագ՝ թերևս յետին, և քան զենաւս դժուարին 'ի գիւտ բանից և 'ի բացատրութիւն իմոցս իսկ յուզելոց կրից. վասն որոյ և ոչ իսկ զներողամտութիւն քաջակորով ունկնդրացդ ժտել համարձակիմ, ուր անձամբ յանձնէս զպարտութիւն խոստովանիմ։

Ահա տուան ձեզ հրամանք, մանկունք վարժից, դառնալոյ 'ի հայրենիսդ. արձակեալ էք յուսմանց և յուսումնարանէս. ո՜հ, երթայք ուրախութեամբ և տրտմութեամբ, որով կրիւք արձակէ զձեզ ժողովս այս և ձայնս այս։ Երթա՛յք, զծանր տուեալ զողջոյն հրաժեշտին առ բազմերախտ ժողովս, որոց առաջի մանկութիւն ձեր զարգացաւ, և ոյժ ձեր կշռեցաւ. երթա՛յք,

ժտելով զսուրբ, զյետին, զխանդաղակաթ օրհնութիւնս հարցդ և ըզՀայրապետիս. երթայք, առեալ զգըրաւական գորովդ սոցա և զհամօրէն ակմբիս զգութ և զչերմաջերմն մաղթանս. երթայք, ուրախութեամբ բարձեալ զարտօսրածին արդիւնս որայիցդ և դարձարուք 'ի հայրենիս... Ա՛յլ յուշ. կացէք վայրիկ մի ևս. և մինչև տուեալ զյետին համբոյրս և ընկալեալ զյետին գիրկքս, մինչև խառնեալ զարտասուս 'ի յետին ողջոյնքս, լուարուք ո՛ սիրելիք, դողդոջուն ձայնիս՝ զոր բազում անգամ լուայք, այլ գուցէ ոչ ևս լուիջիք բնաւ. հանդուրժեցէք փոքր մի ևս, զի արձանացեալ իմ՝ 'ի սեամս ելից ձերոց 'ի վարժարանէս՝ սփռեցից առաջի ձեր զվերջին թելադրութիւնս սրտի դրդելոյ 'ի պարտուց իւրոց, 'ի սիրոյ ձերմէ և 'ի շքոյ ատենիս. անսայցէք ինձ առնուլ քննել ընդ ձեզ, Օ՞ր ինչ է զոր թողուք աստ ուստի մեկնիքդ, և զինչ է զոր գտանիցէք անդ՝ ուր երթայքն։

Ա.

ԱՌՂԵՒՈՐ հետաքնին հանդերձեալ վերանալ ուստէք՝ դառնայ մի անգամ ևս ակն տալ վայրացն ուր դեգերեցաւ. և նաւ լուծեալ 'ի հանգրուանաց՝ ողջունելով բաժանի յափանցն. այսպէս և քաջախոհ մարդիկ բազում անգամ հանգիստ գործեալ յանդադարելի ընթացս կենաց՝ խոկան 'ի կենցաղական իւրեանց վարս, անցելոյն նկատմամբ զապագային ուղղեն զպատահմունս։ Որոյին հանգոյն և ձեզ՝ որոց աւարտեալ զհրահանգս ուսմանց հանդերձեալդ էք թողուլ զմարզ և զմարզարան, պարտ և պատշաճ է քննել զինչ ինչ թողուք 'ի նոսին, կամ զինչ ստացայք 'ի դաստիարակութեան ժամանակիդ, զի չիք իբրև զայն ժամանակ կարևոր 'ի բովանդակ իսկ յընթացս կենաց։ Զանգի 'ի սմա, եթէ ներէք ինձ ասել զայս, 'ի սմա անբանականդ ձեր մարդ փոխել էառ 'ի բանականն. զզաղփաղփուն տիս փոխանակեաց հասակ ներկուռ՝ հիմն և արմատ հանդերձեալ հիւսման կենաց։ Մանկունք եկեալ՝ արդ պատանեակս դառնայք. հելք արձակեցան 'ի ձեզ և ալիք իմաստութեան պահանջին 'ի ձէնջ։ Օ՞մտաւ ածէք զամն զառաջինս, դարձայք հայեցարուք 'ի ձեզ և շուրջ զձեօք. ահա ամենայն ինչ այլափոխեալ է յառաջնմէն. ժամանակ, և մանաւանդ դաստիարակութիւն զամենայն կերպարանափոխ արար, նոր ձեզ աչս հաստատելով, և նոր դէմս որոց շուրջ զձեօքն են. իբրև 'ի բովս իմն զարմանալիս արկեալ՝ նորոգ ձուլեաց զձեզ տակաւ ըստ աձել հասակիդ։

Ա՛յս զառ 'ի ծնողաց ձերոց զլացեալն ընդ մնդեան՝ զկնիքն ազգային զհայրենի լեզու, որ ոչինչ նուազ քան զկաթն և զարիւն գիտէ վսեմ և ազգասէր գործել զսիրտ, տպաւորեաց 'ի ձեզ զպանծալի լեզուն Հայոց, զորոյ փառօք ոչ գլեսցէ օտար լեզու յաւիտեան։ Բայց և զկարևորագոյնս յօտարաց անտի 'ի պարմայել և 'ի դիւրել զքաղաքավարութիւն ժամանակիս՝ հոգացաւ նա լծակցել ընդ բնկիդ, զնախապատիւն յեւրոպական լեզուս զիտական բարբառ չքնաղ, զարքունական լեզուն Պաղղիացւոց, և զվաճառական Անգղիացւոյն սլուսլիւն։ Ա՛յս առաջնորդեաց ձեզ ոտն առ ոտն՝ յուղիղ, 'ի հզօր և 'ի պերճ խօսս, քերականական, հռետորական և քերդողական վարժիւք։ Ա՛յսուամբ ծանեայք զկեանս անցելոց ազգաց, և զանցս և զչափս ժամանակաց. նոյնաւ ուսայք զինչ է հողագունտս յորում կեանս ձգեմք, զինչ 'ի խաւս նորա, զինչ 'ի վերին երեսս. զինչ են բրածոյիցս բնութիւնքն և զինչ աճողականքն բուսականք. զինչ շարժուն կենդանիք, և զինչ հրաշալին 'ի նոսա մարդ, և որ օրէնք քաղաքավարութեան նորա։ Ա՛յսուամբ կառուցէք զաչս ուսանել զձանապարհս և զօրէնս լուսաւոր աշխարհացն՝ որ թաւալ առնուն զգլխոք ձերովք, և զհամօրէն տարերաց օրէնս՝ բնաբանութիւն համառօտեաց ձեզ։ Ա՛յսուամբ խորաձնին լեալ որպէս արժանն էր 'ի ծանօթութիւն ձեր ինքեան՝ ու-

սայք զմարդկային օրէնս քաղաքավարութեամբն, բարոյականաւն և բանական արուեստիւն։ Եւ առ յարդարուն գործել զկեանս ձեր, և զձեռք և ըզմիտք յաջող և ճարտար, 'ի պէտսպէս գեղեցիկ և ազատական արուեստից մխեցայք 'ի ճաշակս, 'ի թուական և 'ի համարողական, 'ի չափական և 'ի գծողական, 'ի զարդագրութիւն և յուրուագրութիւն, 'ի դեղանկար և 'ի մանրանկար, 'ի վիմագծութիւն, 'ի ճարտարապետականն և յերաժշտական։ Եւ 'ի վերոյ ամենայնի սոցա՝ զանկն 'ի կատարելագոյնն որ 'ի ձեզ մտն հաստատեալ՝ ուսայք զինչ է հոգի, և զինչ նորա պարտք առ այն՝ յորմէ առաւն։

Այս ամենայն և որ այլն ևս՝ աստ ստացայք դաստիարակութեամբ. և 'ի մեկնելդ իսկ աստի չկարէք 'ի բաց թողուլ, բայց միայն 'ի պարապմանէն կասիցիք. քանզի 'ի սոցին իսկ 'ի խնդիր ելեալ եկեալ էիք 'ի հայրենեաց, հարկ է թէ 'ի միասին տանիցիք։ Եւ զրանն ձեզ եթէ յարգողք ժամանակի և իմաստութեան՝ անկորուստ պահիցէք զարդիւնսնոցա։ Այլ մի և մի բնաւ կարծել, թէ զամենայն բարձեալ ձեր և չմնայցէ ինչ 'ի կարևորացն։ Տակաւին զսակաւս 'ի բազմասեռ ազգաց մակացութեանց ուսայք, և զայն իբրև առ ճաշակ մի. խտիր է ընդ ուսեալ և ընդ գիտուն, ընդ գիտուն և ընդ իմաստուն. ուսեալք բազում, գիտունք սակաւ, իմաստուն հազիւ ոք, տգէտ ամենայն ոք. և դուք ինքնին կոյր տգիտութեամբ եկեալ, արդ լուսաւոր իմն տգիտութեամբ դառնայք. յայնժամ սովեալք էիք 'ի գիտութենէ, այժմ անյագ քաղցեալք։ Կատարումն գիտութեանց երբէք ոչ է. ամենայն ումանց 'ի սկզբանէ աշխարհի արկեալ են յառաջաբանք, և ոչ ոք ընթերցի զվերջաբանն. այսպէս չափաւոր հաստատեալ մեզ նախախնամութեան միտս, այլ երկարատոկս և ջանս անչափս. զի թէ ոչ բոլորումն՝ գոնեայ առաւելագունին հասցուք մասին գիտութեան։ Քանզի թէպէտ և ոչ կատարի գիտութիւն, այլ զարգանայ. ամենայն դալոք լուծանէն զկնիք մի համատարած մատենի նորա, և "Որ ա.. ւուր բղխէ զբան, և գիշեր գիշերոյ .. ցուցանէ զգիտութիւն ..", երգեաց աստուածային քնարն Դաւթի, և դուք վկայեսջիք ձեզէն հասեալ յիրացն վերայ։ Ու ձեռն օրինակօք հաւատարիմ արարից ձեզ։

Հաւաղիկ յաւուրց Նոյի և Հայկայ առաջնոց երկնազնեայ 'ի գիտակս Յրարատայ, մինչև ցԵրշել և ցԼեռս՝ բիւրք բիւրուց աչաց ընթեռնլով զերկինս՝ հազիւ զմետասանից լուսագնեայ գնացս ծանեան իմաստունք հանդերձ ոչ ինչ յոլովիւք յարբանեկաց նոցա. զնոյն և մեք ուսեալ 'ի նոցունց աւանդեցաք ձեզ յառաջ քան զսակաւ ամն. այն ինչ ամք ևս երկու 'ի վերայ անցին, ո՞ ոչ սիրանայցէ, զոր հինգ հազար երկայնաձիգ ամաց քննութիւնք ոչ գիտացին՝ այժմ դեռ ևս գիտացաք մեք չորս և հինգ ևս նոր աշխարհս 'ի վերայ առաջնոցն, և յերկու ամն արարաք և վարժապետքս և վարժեցեալքդ զգիտութիւն հինգ հազար ամաց, և թերևս զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի այժմիկ ևեթ սքողեալ տեսաք։

Յիշեցուցից ձեզ և այլ ինչ՝ որում ակնատեսն եղերուք և փորձառուք. յառաջին ամն երթալով ձեր 'ի Հայրենիսն Լուսայ՝ ընդ ծով և ընդ ցամաք կիսոյ աւուր ճանապարհաւ կարօտէիք. յետ ամաց բացաւ ձեզ իբրև 'ի մոգելոյ՝ ճանապարհ միաժամեայ, անկենդան օդաշունչ կառաք ցամաքաթև անցանել ընդ աղրիական ալիս. օն անդր, և Վենետկեան հազար չորեքարիւր ամաց զարմանալին կղզեքաղաք՝ առաջի աչաց ձերոց այլակերպեալ եկաց ևս զարմանահրաշ ցամաքակղզեակ, զեռամղն բազմակամար գօտին արկեալ շաղկապ ընդ անկայուն աղտաղտուկն, 'ի աքանչանս և 'ի կորանս պիսիդոնական երեքժանեայ զօրութեանց։

Ու ձեաք իսկ աշխարհ բռնագոյնս ցանցեալ 'ի բարգաւաճանաց՝ անհրաժարելի գիտաց զերազութիւն. և կառք արձակեալ զերիվարս՝ ծխով անդրուանէնայն դալոք լուծանէն զկնիք մի համատարած մատենի նորա, և "Որ ա.. ւուր բղխէ զբան, և գիշեր գիշերոյ .. ցուցանէ զգիտութիւն ..", երգեաց աստուածային քնարն Դաւթի, և դուք վկայեսջիք ձեզէն հասեալ յիրացն վերայ։ Ու ձեռն օրինակօք հաւատարիմ արարից ձեզ։

Հաւաղիկ յաւուրց Նոյի և Հայկայ առաջնոց երկնազնեայ 'ի գիտակս Յրարատայ, մինչև ցԵրշել և ցԼեռս՝ բիւրք բիւրուց աչաց ընթեռնլով զերկինս՝ հազիւ զմետասանից լուսագնեայ գնացս ծանեան իմաստունք հանդերձ ոչ ինչ յոլովիւք յարբանեկաց նոցա. զնոյն և մեք ուսեալ 'ի նոցունց աւանդեցաք ձեզ յառաջ քան զսակաւ ամն. այն ինչ ամք ևս երկու 'ի վերայ անցին, ո՞ ոչ սիրանայցէ, զոր հինգ հազար երկայնաձիգ ամաց քննութիւնք ոչ գիտացին՝ այժմ դեռ ևս գիտացաք մեք չորս և հինգ ևս նոր աշխարհս 'ի վերայ առաջնոցն, և յերկու ամն արարաք և վարժապետքս և վարժեցեալքդ զգիտութիւն հինգ հազար ամաց, և թերևս զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի այժմիկ ևեթ սքողեալ տեսաք։

Յիշեցուցից ձեզ և այլ ինչ՝ որում ակնատեսն եղերուք և փորձառուք. յառաջին ամն երթալով ձեր 'ի Հայրենիսն Լուսայ՝ ընդ ծով և ընդ ցամաք կիսոյ աւուր ճանապարհաւ կարօտէիք. յետ ամաց բացաւ ձեզ իբրև 'ի մոգելոյ՝ ճանապարհ միաժամեայ, անկենդան օդաշունչ կառաք ցամաքաթև անցանել ընդ աղրիական ալիս. օն անդր, և Վենետկեան հազար չորեքարիւր ամաց զարմանալին կղզեքաղաք՝ առաջի աչաց ձերոց այլակերպեալ եկաց ևս զարմանահրաշ ցամաքակղզեակ, զեռամղն բազմակամար գօտին արկեալ շաղկապ ընդ անկայուն աղտաղտուկն, 'ի աքանչանս և 'ի կորանս պիսիդոնական երեքժանեայ զօրութեանց։

Ու ձեաք իսկ աշխարհ բռնագոյնս ցանցեալ 'ի բարգաւաճանաց՝ անհրաժարելի գիտաց զերազութիւն. և կառք արձակեալ զերիվարս՝ ծխով անդրու-

վարեցան, և որպէս շինանիստս տողեալք կուռ զՀետ միմեանց սլացան ընդ դաշտ և ընդ քաղաք. Ճանապարհք ընդ օդս փորձեցան յառաւել երագութիւն. և և՛ս առաւելագունին ցանկութիւն զամ-պահարութեանց հուր ստեղծեալ ելեք-տրեայ հեռագրութեամբք՝ 'ի վայրկե-նի ծանոյց զդէպս հանդիպեալս հարիւ-րաւոր ասպարիզաց հեռագոյն։—Ա-ռաջի աչաց ձերոց աղօտանշմար նրբա-փողոցք քաղաքիս ջահավառեալ պայ-ծառագեցան 'ի գիշերի նրբանիւթ դիւրակեզ ոգելուսոնն։—Ա՛ռաջի ձե-րոց իսկ աչաց երկայնատեգ երկրախու-զակ ձագարաձև կնճթացեալ գործի՝ հերձակտուր խաղաց 'ի խաւ'իխաւոյս պղուտոնական ծոցոյ, և յանհետազօ-տելի անդնդային վայրացն, 'ի շեղջա-շեղջ յազի աղբերացն միջոյ՝ ջուր քաղցր և նորահամ խնդրելով՝ ած եբեր վեր-նամուղ, զարմացուցեալ հիացոյց զՀա-մածոնն Վնէժ։—Այ՛ եթէ բացջիք զտարեգիրս՝ ո՞րքան գտջիք գիւտս նո-րանորս ուրեք ուրեք. ո՞րքան հայթ-հայթանք բարգաւաճանաց հեռաւորք՝ մերձեցեալք, և մերձաւորք հասարա-կեալք։

Ա՛յլ ընդէ՞ր զօտարս յիշել և զմե-րովքս զանց առնել։ Ա՛ռաջին քաղաք ո-րում յայց ելանիցէք յուղղոգ, ակնն փոքուն Ա՛սիոյ հանճարեղն Օ միւռնիա, առաջի արասցէ զմի 'ի նախապատիւ ուսումնական ընկերութեանց[1] և դպրո-ցաց Հայոց, ամ ըստ ամէ կազդուրեալ և գեղեցիկ շառաւիղաց ընդարձակեալ. Թղթարան մի նախանձընդդէմ Փարի-զու և Ֆրանքֆորթայ՝ կանգնեալ 'ի վեհաշնոյն[2] որոյ յիշատակ և սուգ տակաւին կենդանի է 'ի մեզ. և 'ի հայրենիս ձեր 'ի Ի՛զմանդիոն տեսջիք զնորին և զիւրայոցն ջանից պտուղ՝ ըզ-գեղազարդեալ դրամատուն Օսմանեան պետութեան։ Ընդ տեսջիք և զայլ մեծի Ա՛զգասիրի[3] զոր և զնա արժա-նաւորեցայք 'ի հերուն տեսանել աստ, զբազմադէմ գործարանս կենցաղօգու-տս, զվառ'իվառեալ վառօդարանն ար-քունի, զՀրաձիգ բամբակն նմանագոր-ծեալ, զդպրոցն ամենցուցեալ։ Տես-ջիք զընկերութիւնս հայրենասէրս և զվարժարանս յաւելեալս՝ ազգայնոցդ ջանիւ և պետութեանն։ Տեսջիք և լրագիրս հինգ կամ վեց հայեցիս 'ի զա-նազան կողմանց հայասեռից ընթա-ցեալ 'ի տունս և յընթերցարանս ձեր, յորոց և ոչ մի երևէր մինչդեռ էիքն 'ի հայրենիս ձեր. տեսջիք և զնորահաս-տատ Ա՛ստանգարանն վերծանութեան, և զմեծատարը ընկերութիւն մի, ար-դիւնս համավաստակ ջանից ծաւալելոյ ազգասիրութեան։

Յիշեցուցից այժ, և մի առ ամօթ խածութեան ձերոյ անիրաւեցայց առ ջանս ձեր. յիշեցուցից ձեզ և զձեզ ինքն. ահաւադիկ, ո՞ սիրելիք, յաւարտ անցելոյ վեցամեայ հարցաքննութեանդ կարծէիք գոգցես աւարտեալ զուս-մունսդ, և թերևս իղձք և՛ս լինէին ձեզ անդէն դառնալոյ 'ի հայրենիս. քաջ է. այլ ո՞ յայնժամ, ասացէք ինձ, ո՞ 'ի ձէնջ գիտէր 'ի վիմի նկարագրել՝ զոր 'ի թըղ-թին գծէիք, և զարմացուցանել ընդ մաքրութիւն պատկերին և զարուես-տաւորսն իսկ. ո՞ր ուրուք 'ի ձէնջ հա-նեալ էր մինչև ցայնժամ զդէմս ձեր և զսրբոց դեղովք 'ի պաստառ[2], և աքան-չացուցեալ զատեանս ընդ Ճարտարու-թիւն ձեռինն և ընդ երագութիւն. կամ ո՞ր հատեալ շերտաձև զժանիս փղաց՝ մանրակտիտ մատամբք զերփին-ունակ մանրանկար պատկերսն և կեր-պարանս հանեալ[3], յերկայնմտութիւն փոքրիկ անձինն և 'ի քաջիկ վարժու-թիւնն հաճեցուցեալ զամենեսին. ո՞ր յայնժամ զաղգի ազգի յօրինուածս Ճարտարպետականս ստեղծագրեալ էր՝ 'ի հաճութիւն նորին իսկ անխոնջ վար-ժապետին. և ո՞ր երբէք ոլորեալ զՀա-գագն ընդ պղնձակապ եղէգն՝ յանկար-ծոյն զատեանս 'ի խոր լռութիւն ըմբռ-

1 Սինեաց ընկերութիւն և Վարժարանք նորա։
2 Յակոբ Շելէպի Տիզ։
3 Յովհաննէս Ամիրայ Տատեան։

1 Գ. Վահան Նեթի և Սերովբէ Պոլսեան։
2 Գ. Խորէն Մոշորոյ։
3 Պօղոս Երամեան։

նէր, և ապա յինքեան լռեն՝ զնա 'ի ծափաձայն գովութիւն շարժէր[1]։ Բայ-սոքիկ ամենայն, ո՛ քաջք, ո՞չ ապաքէն արգասիք են վերջին ջանից ձերոց 'ի յետին վեցամեայ պարապմանդ՝ առանց որոց ո՞ղքան պակասք 'ի գովութենէ, 'ի փառաց, 'ի ճարտարութենէ և 'ի շահոյ դառնայիք։

Բայց արդ այս ամենայն յոր երկարեցի՝ զի՞նչ յայտ առնիցեն ձեզ. ո՞չ ապաքէն զայն զի անսպառ են գիտութիւնք, և մարդս միշտ համքակ, և միշտ կարօտ և կարող յուսանել. քայլ զոր յառաջէ նա 'ի գիտութեան՝ խոստովանի զյետամնացութիւնն. ասպարէզ զոր կարձէ՝ նոր և ընդարձակագոյն ևս բանայ նմա. և որ յերեկն գիտուն էր ըստ ժամուն կարծեաց կամ պիտոյից՝ այսօր ընդ տգէտս դասի՝ եթէ ոչ ժողովեաց զսերկեանս գիւտ։ Բպա ուրեմն և դուք յայնժամ միայն գիտունք լինիջիք, յորժամ ոչ կասիցէք 'ի հետամուտ լինելոյ գիտութեանց, մինչև հասցեն ձեզ ամք՝ յորս միտք անբաւականք յրմբռնումն նորոյ գաղափարի՝ զանանց գիտութիւն որոձայցեն։

Բայց թէպէտ և անհրաժեշտք յուսմանց, թողուցուք աստանօր զԱՍուցիչս ձեր։ Ոչ ինձ հարկ ազդ առնելոյ ձեզ՝ զի՞նչ պարտիցիք քրտանց նոցա. երախտագիտութիւն զամենայն խօսեսցի 'ի ձեզ. վաստակք նոցա հանդերձ մաշեալ կենօք նոցին կեցցեն 'ի ձեզ ցորչափ դուքդ կեայք. և որպէս նոքա նեղեցին ձեզ 'ի սրտէ եթէ վշտացուցէք ինչ զնոսա, այսպէս և դուք՝ եթէ թերացեալս երբէք զնոսա յիշիցէք, ընդ նմին ածեալ զմտաւ՝ զի քան զդաստիարակաց արուեստ չիք ինչ դժնդակ և բազմազգոյշ։ Ա՛հ, ո՛հ, զի 'ի փորձոյ ուսայ. ողքան ամենօգուտ իր, այնքան խիթալի։

Թողուք աստանօր և զՀարքս պատուական, որոց 'ի Ա՛խիթարայ առեալ զուխտ անդուլ ջանից 'ի նպաստ ազգին իւրեանց՝ անխնայ հեղին 'ի ձեզ զնոյն. և այսօր ահաւադիկ առաջի ձեր գումարեալ է բովանդակ ուխտն սուրբ 'ի իրախոյս ձեզ և յողջոյն յուղարկաւորի։ Բրախտիս ոչ ինչ խնդրեն 'ի ձէնջ, զի վարձք մեր յերկինս են առ Բստուած որչափ ինչ միամտութեամբ վաստակեցաք, և յերկրի վարձք մեր դուք էք և համբրէն ազգդ՝ որոց նուիրեմք զջանս և զկեանս, և խեթկեալք բազումանգամ 'ի հակառակորդաց՝ համարիմք և զայն շնորհս Բստուծոյ, զի անխառն յամենայն երկրաւոր յուսոյ գործէ զազգասիրութիւն մեր, և քաղցրացուցանէ մեզ զծախսելն և զծախիլ՝ զի միայն զազգ մեր շահեսցուք։ Բայց զայլ ինչ եթէ ես լռեմ՝ դուք մի՛ մոռասջիք. զկենակցութիւն ձեր և զգգուանս յընկերութենէ անտի՝ զոր հաճեցաւ տէր 'ի փառս իւր աշխարհաքարոզ առնել. ըզգաւիթան զայնոսիկ՝ որոց երանեցին թագաւորք, սիրացան իմաստունք, համբուրեցին ազգասէրք. զդարանս մատենիցն զաւանդապահս նախնեաց մերոց քրտանց և տքնութեանց. զմամուլն՝ որոց պարտական խոստովանեցաւ զանձն Հայաստան. զեկեղեցին ուր ննջեն հարք մեր առաքինիք և իմաստունք, ուր ննջէ և հայրապետն[1] որ զառաջին ամն մանկութեան ձերոյ հովանաւորեաց. և զնախանձելի զերկնուկակ դամբանն՝ ուր ծածկին նշխարք մեծի վաստակաւորին Հայաստանեայց[2], զոր և համբուրել արժանացայք։ Բ՝ներեսցի ինձ զայս մի նուագ 'ի վեր առնուլ զքօղ չափաւորութեան, յիշեցէ՛ք և զկենդանի գլուխ մեծի վարդապետին[3] զԱեստորիս ամենայն Հայոց, որ զողջոյն զկէս պարագայ Ա՝խիթարեան միաբանութեանս զամն եօթանասուն և հինգ ծախեալ 'ի տան նորա համբարեաց զգիտութիւնս սրբոց և ըզ-Հայոց, և նոքօք պարարեալ դեղերի ըղձիւք 'ի դրունս երկնից. վաստակք նորա ծանուսցեն Հայոց զմեծագոյն մի

1 Յարութիւն Ճէպէճեան։

1 Սուքիաս Սոմալ նախորդ արքայ։
2 Մխիթար։
3 Հ. Մկրտիչ Վարդապետ Աւգեր, ամաց 86. հնագոյն յուխտիս Մխիթարայ, աղօթող Հայոց։

զիւրեանց փառս, և ձեզ՝ զի նախանձելի եղէք տեսութեամբ նորա և օրհնութեամբ։

Զողուք աստանօր զմիս ևս վեհագոյն գլուխ, զդիտապետս Սիւնեաց և զարժանի գահակալ Մխիթարայ, որում կրկին և երեքկին պարտականք էք. նախ զի ընդ խնամօք ձեռաց նորին ուղևորեցայք՝ այսր, և երկրորդ զի ընդ արթուն վերատեսչութիւն նորա վայելեցէք զվերջին անդ, և այժմ նորին օծեալ և հայրագութ աջով ընդունիք զցօղս երկնից թոշակ ճանապարհիդ։ Տևեսցեն՝ի ձեզ ընդ աստուածայնոցն օրհնութեանց և գութք իւր ազնուականք և իղձք։

Զողուք աստանօր ընդ Արժարանիս և զԱրերարս նորա և զսատարս նոցին բարեաց, յորոց առատաձեռնութիւն և՝ի վաստակս ձրի վայելեցէք այսքան ամ. դրուատ սոցա՝ի ձէնջ հնչեցեալ՝ յորդորեսցէ՝ի նմանութիւն նոցին զնոր ազգասէրս։

Զողուք աստանօր և զընկերակիցս ձեր դեռավարժս և զհարազատս, որք ընդ նոյն ընդ ձեր շաւիղ ձգելոց են զընթացս. ցայժմ օրինակ և արգասիք յառաջադիմութեան ձերոյ՝ յորդորք էին նոցա նմանելոյ ձեզ և յառաջել. այսուհետև համբաւ ձեր և յաջողութիւնք վաստակոցդ պահանջին՝ի նախանձաւորութիւն և յանխաբ ապացոյց ջանից։ Այո՛, զայդ տեսեալ, գիտեմ զի ջան դնէք և դուք, կրսերք, որք մնայքդ աստ, գերազանցել զաւագ եղբարքդ. որպէս զի և մեք և ազգս մեր զմիշտ յառաջադիմութեան առնուցումք զյոյս։

Զողուք նաև զմիմեանս իսկ. քանզի ոմանք՝ի ձէնջ ըստ տարադէպ բաղդի տանս Զորգոմայ՝ յօտար գնան երկիր, հեռագոյն ևս քան զբաղմացդ՝՝՝ի բնոյն Հայոց. թէպէտ առ հրահանգեալ ազգինս, և՝՝՝ի մէջ հայասէր և հայանման Լեհաց, որք մարդասիրաբար ժողովեցին զպանդխտութիւն Հնոյ, և մեծապէս պատուեցին. անմոռաց ունիջիք զբծորդութիւն եղբայրութեանդ. առջիք և տաջիք ծանօթս զհամազգի եղբարց ձերոց որք աստ կամ անդր, և ընտանեցուսջիք միմեանց զդաղթականս տանն Լրամայ։

Հուսկ ապա թողուք և զվանատուր ափունքս, զերկիրս իտալական և զմի՝՝՝ի կարի զարմանալի նորայն քաղաքաց, զմայր գեղարուեստի և զվաճառականութեան, զձեռնտու արևելեան ազգաց և զհին բարեկամ Լևոնեանց մերոց և Կոստանդեանց։ Ո՞՛որք ընդ Զիցիանեան և ընդ Պալլադեան սիրացարուք աստ ընդ հրաշակերտս, յորժամ վերջին անգամ տեսջիք զերկնանման գմբէթան, զամպաՃեմ աշտարակս զանգակաց, զանտառս կՃէից սեանց, զհրաշապարակն հիասքանչ, զվսեմաշուք ապարանս դքսին, զլայնատարդ նաւարանն, զանդնդահիմն զահագնապարիսպ ամբարտակն՝ անջրպետս ծովուց և ամեհի խուժանի նորա վկանդիչ, դրոշմեսջիք՝՝՝ի սիրտս ձեր զտիպս նոցա խորագոյնս քան զանուանս վաՃառական Հայորերոյն՝ զորս ընթերցայք՝՝՝ի սինս Արքոյն Մարկոսի։ Լու յորժամ արևելեան գՃՃուութիւնքն յանդիման լինին ձեզ, յիշեցէք զդրախտն Լրոպիոյ յորում զեօթն ամ սիւգ ծծեցէք. յիշեցէք և զՀայաստան աշխարհին Ճարտարագործս, և զայժմուս կերպարանս, և ձեռն մի և դուք տուք զարթուցանել զգեղարուեստից Ճաշակս։ Լյլ առաւել ցանկացողք և տածիչք լերուք գեղային և ազատական մնաց ժողովրդեան, յորոց միջի արարէք զդաստիարակութիւն ձեր. յիշեսցի՝՝՝ ձեօք հինն և քօղաւոր առընչութիւն Հայաստանի և Իտալիոյ սկսեալ որպէս կարծեմ յառաջ քան զաւուրս Հայկայ։

Այսպիսիք են ահաւասիկ զոր թողուքն աստ ուստի մեկնիք, ո՛ սիրելիք. արդ ժամ է դառնալ և տեսանել զոր գտանիցէք անդ ուր դէմդ եղեալ է։

(ԱՒԱՐՏՆ ՑԱՌԱՋԻԿԱՑՍ։)

1 Արհիապատիւ Տէրս մեր Գէորգ Վարդապետ Հիւրմիւզ, որ ածՃ ընդ իւր զմանկտիս՝՝՝ի Կոստանդնուպօլսոյ յամին 1841, և ամբարձաւ յաթոռ Մխիթարայ յամին 1846։